<<ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ընթերցանությունը որպես ակտիվ գործընթաց տարրական դասարաններում

Առարկա՝ դասվար

Հեղինակ՝ Ֆերոյան Սուսաննա

Ուսումնական հաստատություն՝ Ծովագյուղի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

- Ներածություն
- Ընթերցանությունը որպես ակտիվ գործընթաց տարրական դասարաններում
- Եզրակացություն
- Գրականության ցանկ

Ներածություն

Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը: Այն ոչ միայն օգնում է, որպեսզի դառնաք խելացի, այլ նաև կարող է, ըստ էության, բարելավել մեր ուղեղի աշխատանքը:

Ընթերցանությունը կարող է օգնել քնելուց առաջ ավելի լավ քնել: Ինչպես օրինակ վազքը բարելավում է մեր սրտանոթային համակարգի աշխատանքը, պարբերական ընթերցանությունը բարելավում է հիշողությունը՝ մարզելով մեր ուղեղը: Տարիքի հետ հիշողությունն ու ուղեղի աշխատանքը թերանում են, սակայն ընթերցանությունը օգնում է դանդաղեցնել այդ գործընթացը՝ ավելի սթափ պահելով միտքը: Ուղեղի հաճախակի վարժանքները կարող են իջեցնել ուղեղի ծերացումը շուրջ 32 տոկոսով:

Նպատակները՝

- ձևավորել ընթերցասիրություն և ընթերցողական կարողություններ որակական հատկանիշների պահպանմամբ

- ապահովել երեխայի անձի զարգացումը՝իրականացնելով բարոյական , գեղագիտական դաստիարակություն, նպաստելով երեխայի ինքնաճանաչմանը, ինքնադրսևորմանը, ձևավորելով համագործակցային ունակություններ, համակեցության որակներ
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական միտքը,գաղափարը, հասկանալու, ենթատեքստը կռահելու, հերոսների գործողությունների տրամաբանությունն ըմբռնելու, դրանց շուրջ դատողություն անելու կարողություններ
- մշակել մեթոդներ, հնարներ ընթերցանությունն ակտիվացնելու համար

Խնդիրները՝

- բացահայտել և վերլուծել մայրենիի դասավանդման գործընթացում սովորողների ընթերողական կարողությունները
- ուսումնասիրել դիդակտիկ խաղերի կիրառման առանձնահատկություններն ընթերցանության ժամերին

Ընթերցանությունը որպես ակտիվ գործընթաց տարրական դասարաններում

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ
ֆիզիկական վարժությունը՝ մարմնի

Անգլիացի պոետ Ադիսոն

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է՝ զարգացնել կարդալու, պատմելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ:

Կարդալու կարողությունները բնութագրվում են հետևյալ որակներով՝ճիշտ, սահուն, հասկանալով:

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է տալիս հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական , հաղորդակցական , համագործակցային , ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Մինչ երեխային ընթերցանության համար գիրք առաջարկելը՝ անհրաժեշտ է նախապատրաստել նրան նոր գրքի շուրջ աշխատանքին, այսինքն՝ ստեղծել պայմաններ, որոնց ընթացքում կարթնանա ճանաչողական հետաքրքրություն, ինչն էլ կօգնի աշակերտին հաղթահարելու կարդալու տեխնիկայի հետ կապված դժվարությունները: Աշակերտի ընթերցանության համար նախատեսված ոչ ծավալուն ստեղծագործությունը պետք է հրապուրի երեխաներին և ընթերցելու ցանկություն առաջացնի:

Անծանոթ նյութն ընթերցելը առաջին դասարանցու համար այնքան բարդ աշխատանք է, որ առանց ուսուցչի ճիշտ մշակված օգնության, ոչ բոլոր աշակերտներն են ունակ՝ դրանք հաղթահարելու: Այս տարիքում երեխաները նախընտրում են ունկնդրել գեղարվեստական ստեղծագործությունը և ոչ թե ընթերցել: Հարկավոր է երեխաներին սովորեցնել հաղթահարել կարդալու հետ կապված դժվարությունները: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, որ աշակերտները հաճույք ստանան ինքնուրույն կերպով գրքին հաղորդակցվելիս: Ընթերցելուց հետո անհրաժեշտ է կատարել տարաբնույթ աշխատանքներ տեքստի շուրջ: Կարելի է հանձնարարել տանը նկարել, փնտրել և դասարան բերել նմանատիպ նոր ստեղծագործություններ:

Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ հայրենիքի, նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ:

Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը, հնարավորություն է

տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Ընթերանության դասերն ակտիվ անցկանելու համար կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝

- ՈՒղղորդված ընթերցանություն,
- Ընտրովի ընթերցանություն,
- Կրկնակի գրառման օրագիր,
- Ընդհատված ընթերցանություն

Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից: Նույն թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները խաղի մեծ պահանջմունք ունեն: Խաղը երեխաների մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է: Այն երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում, զարգացնում է ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ: Ընթերցանությունը էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է գտնել ընթերցանության այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը: Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ընդհանրապես կրտսեր դպրոցականի համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Գործունեության այս ձևը հատկապես կարևորվում է տվյալ տարիքային խմբի համար: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով, դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի:

Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր, յուրահատուկ միջավայր:

Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝տարվելով հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը: Նրանք հեշտությամբ և առանց պարտադրանքի ներգրավվում են ընթերցանության մեջ: Ընթերցանության գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից ելնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ այն համապատասխանի ուսումնասիրվող թեմային, աշակերտների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի՝ճիշտ ըմբռնելու բովանդակությունը:

Ներկայացնում եմ խաղերի մի շարք, որն ուղղված է ընթերցանությունն ավելի արդյունավետ, ակտիվ ու ցանկալի դարձնելու համար:

Խաղ1

Խաղը նախատեսված է 30 հոգանոց III դասարանի համար: Կազմում են 10-ական խմբեր (յուրաքանչյուր շարքում՝ 10 աշակերտ): Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ են նախապես՝ տեխնոլոգիայի ժամին, կտրատած կարմիր, կանաչ, դեղին տերևներ և պաստառ՝ որի վրա պատկերված է հսկա ծառի բուն՝ ճյուղերով: Կարելի է ծառի վրա նկարել աչքեր, քիթ ու բերան: Բարի ժպիտը էլ ավելի կներշնչի երեխաներին, կոգևորի: Բարձրաձայն կարդալ համապատասխան թեմայով ընտրված տեքստը: Խմբերին կբաժանվի դեղին, կարմիր և կանաչ տերևները: Երեխաները նախապես տերևների ետևում կգրեն իրենց անունները: ՈՒսուցիչը կբացատրի առաջադրանքի էությունը: Խմբերից յուրաքանչյուրին կտրվի մի խոսքի մաս, ըստ խմբերի՝ դեղին-գոյական, կարմիր-ածական, կանաչ-բայ: Աշակերտները լուռ բնագրից կընտրեն խոսքի մասն ու

կգրեն տերևի վրա: Ով շուտ վերջացնի, կմոտենա և կփակցնի իր տերևը ծառի ճյուղին: Արդյունքում՝ խմբերից յուրաքանչյուրը կստուգի մյուսի առաջադրանքի ճշտությունը (կարմիրը՝ դեղինի, դեղինը՝ կանաչի, կանաչը՝ կարմիրի): Քանի որ նախապես տերևների ետևում գրվել են աշակերտների անունները, հայտնի կդառնա, թե ով լավ չի յուրացրել խոսքի մասերը: Կհաղթի այն խումբը, ով անսխալ կկատարի առաջադրանքը, իսկ սխալ գրված խոսքի մասը «ծառից կպոկվի և արմատների մոտ կփակցվի» մինչև մյուս խաղը: Այսպես օրինակ՝ տեքստից կընտրենք խոսքի մասեր /գոյական, ածական,բայ/:

Այս ամենի արդյունքում ստացվեց մի ծառ, որը խորհրդանշում է դասարանը և տերևները՝ աշակերտները: Խաղի շնորհիվ լուծվում են թե՛ ուսումնական, թե՛ կազմակերպչական և թե՛ դաստիարակչական խնդիրներ:

Խաղ 2

«Գանձերի կղզու բանալինը» մի հետաքրքիր ու իմաստալից խաղ է: Խաղը կազմված է ընտրանքային փուլից: Յուրաքանչյուր փուլ ունի երեք խաղացող: Խումբը կազմված կլինի 10 հոգուց (1 շարք): 30 հոգանոց դասարանում կլինի 3 խումբ: Յուրաքանչյուր խաղին կմասնակցի 10 հոգուց 3-ը: Հաջորդ փուլին՝ մյուս 3-ը: Խմբի ղեկավարը, ով ընտրվում է նախապես, ուժեղագույնն է, մասնակցում է սուպեր խաղին: Գրատախտակին փակցվում է պաստառ՝ 4 շարքից կազմված գրպանիկներով:

Յուրաքանչյուր գրպանիկում 3 հարց է տեղադրված, որը ընտրվի տարբերակով քաշում է աշակերտներից 3-ը: Գրպանիկներին ամրացված են փայլաթիթեղից պատրաստված բանալիներ: Ճիշտ պատասխանելու դեպքում բանալին մնում է խմբին: Սխալ պատասխանելու դեպքում բանալին մնում է գրպանիկում: Առաջին փուլն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ կամ շարք հաշվում է, թե 3 հարցից քանիսին է պատասխանել և քանի բանալի ունի:

Նույնությամբ անց են կացվում հաջորդ 2 փուլերը, ապա՝ հաշվում բանալիները:

Սուպեր խաղն անց է կացվում միայն խմբերի ղեկավարների հետ: Հաղթում է այն խումբը, ով շատ բանալիներ է կարողանում ձեռք բերել: Հաջորդ խաղերին իրավունք է տրվում, որ հենց հաղթող խումբը կազմի թեմատիկ ամփոփման հարցերը: Դպրոցի պայմաններում հեշտությամբ կարելի է պատրաստել խաղի համար անհրաժեշտ պարագաներ: Ստվարաթղթից կտրել բանալիներ և երկու կողմից սոսնձել փայլաթիթեղ: Գրպանիկները պատրաստելու ամենահարմար եղանակը օրիգամի բաժակն է: 15 Գրպանիկներում տեղադրվող հարցերը կազմել գլխագրում տեղ գտած թեմատիկ նյութերից:

Խաղ 3 /1 դասարան/

Էլեկտրոնային գրատախակի վրա կարելի է հավաքել մի վարժություն, որ աշակերտը նկար-բառը կհամապատասխանեցնի վանկերի քանակին:

Դիդակտիկ խաղերը խաղային գործունեության գլուխգործոցներն են: Դրանք միշտ հետաքրքրել են երեխաներին; Այդ ընթացքում երեխաները ցուցաբերել են իմացական և զգայական ակտիվություն : Խաղային գործունեությունը խթանել է նրանց երևակայությունը , խոսքը, մտածողությունը, զգացմունքները: Բացի դրանից , խաղային իրավիճակը նպաստում է որ մանակիցները հաղորդակցվեն և ակտիվորեն համագործակցեն միմյանց հետ: Խաղի մեջ յուրաքանչյուր մասնակից ունի իր << դերը>>, և ամբողջովին պատասխանատվություն է կրում դրա համար: Սա է խաղի դաստիարակչական նշանակությունը: Այս իմաստով , հատկապես, առանձնանում են դերային խաղերը, որոնց ընթացքում երեխան ընդունում է որևէ սոցիալական դեր: Նա ապրում է մի իրավիճակ, որը չի եղել իր կյանքի ընթացքում և դա դաստիարակում է նրան , սովորեցնում ապրել հասարակական կյանքով:

Ընթերցանության դասաժամերին երեխաները պետք է սովորեն լիակատար ընկալել գրական տեքստը: Այլ խոսքով ՝ նրանք պետք է կարողանան երևակայության միջոցով ներթափանցել հեղինակի նկարած կյանք, ապրել այն որպես իրողություն, ապրումակցել հերոսներին, այդ ամենը համեմատել իրենց կյանքի և զգացմունքների հետ և հասկանալ հեղինակի գաղափարները:

Հարց է ծագում. Դասի ընթացքում ինչպես աշխատել, որպեսզի սովորողները դպրոցից հետո ևս, ցանկություն ունենան ընթերցել հայ և համաշխարհային գրականության հրաշալի ստեղծագործությունները, որոնց դաստիարակչական նշանակությունն աներկբա է:

Ընթերցանության դասերին աշակերտներն ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական ստեղծագործություններ: Ստեղծագործության գեղագիական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք՝

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները՝ երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի, սիրո և ատելության, բարու և չարի, մարդու հնարավորությունների ու աշխարհում նրա տեղի մասին:

Ընթերցանության դասերին տարվող աշխատանքները համակարգված են ըստ տվյալ նյութի բնույթի և ժանրի: Անկախ այդ ամենից՝ բոլոր դասերի

ընթացքում անհրաժեշտ է սովորողներին նախապատրաստել նոր նյութի ընկալմանը: Տեքստի շուրջ աշխատանքը հարկավոր է կազմակերպել այնպես, որ բոլոր սովորողները պատկերացնեն, գիտակցեն ու ապրեն ներկայացված իրադարձությունները, հասկանան բովանդակությունը, գեղարվեստական միջոցները և ստեղծագործության հիմնական իմաստը: Սրանով էլ պայմանավորված է դասի հիմնական փուլերի կառուցումը: Դրանք են սովորողների նախապատրաստումն ընթերցանությանը. ստեղծագործության առաջին ընթերցում, աշխատանք տեքստի շուրջ և ընդհանրացում, պատկերացումների ամրապնում և ընթերցած տեքստի գլխավոր իմաստի ընկալում:

Նոր նյութի ընթերցանության նախապատրաստումը դասի կարևոր տարրն է: Դրա բնույթը որոշվում է դասի նպատակներով, ստեղծագործության բովանդակությամբ, թեմայի շուրջ երեխաների ունեցած գիտելիքների առկայությամբ:

Աշակերտների լեզվամտածողության զարգացման միջոց է տեքստին վերաբերող հարցերի բնույթը: Կարևոր նշանակություն ունեն դասանյութերի վերջում տրվող այնպիսի հարցերն ու առաջադրանքները, որոնց կատարումը աշակերտներին մղում է ինքնուրույն վերլուծությունների՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով:

Տեքստի շուրջ ինքնուրույն աշխատանք կատարելու կարողության զարգացմանն է նպաստում նաև դադարներով և յուրաքանչյուր դադարից հետո որոշակի հարցերի պատասխանելու պահանջ ներառող դասանյութերի ընթերցումը: Վերջիններս կարող են լինել ինչպես վերարտադրողական, վերլուծական բնույթի, այնպես էլ ստեղծագործական և կանխատեսումներ ենթադրող հարցադրումներ: Այնուհետև շարունակությունն ընթերցելուց հետո սովորողները պետք է

անդրադառնան իրենց կանխատեսումներին: Դրանք կօգնեն նրանց՝ բացահայտելու ստեղծագործության բովանդակությունը: Աշակերտը պետք է կարողանա առանձին հատվածներից տեղեկատվություն <<քաղել>> և գուշակել ստեղծագործության բովանդակության հետագա զարգացումները, իսկ ընթերցանության ընթացքում վերջնականապես եզրակացություններ կատարել հաղորդվող նյութի բովանդակության վերաբերյալ: Նման պարագայում աշակերտը համոզվում է, որ իր կանխատեսումները հաճախ կարող են չհամընկնել ստեղծագործության բովանդակությանը: Այ անհամապատասխանությունն աշակերտներին կմղի ստեղծագոծության առավել ուշադիր և գիտակցված ընթերմանը:

Ընթերցելու ընթացքում ուսուցիչը պարբերաբար դադարներ թույլ կտա, որպեսզի հարցեր ուղղի աշակերտներին՝շարունակության վերաբերյալ կանխագուշակումներ անելու և դրանք խոսքային կառույցի մեջ դնելու նպատակով:

Մայրենիի ընթերցանության ժամերն առավել ակտիվ են անցնում նաև աշակերտների ինքնուրույն ընթերցանության կազմակերպումն ու գնահատումը՝ բանավոր հարցման միջոցով: Այն անծանոթ ստեղծագործությունների շուրջ աշխատելու կարողություն է:

Եզրակացություն

Հետազոտելով տարրական դասաանների աշակերտների ընթերցանության ակտիվությունը, եկանք այն եզրակացության, որ ընթերցանության ուսուցումը պիտի իրականացվի իբրև ակտիվ, երկկողմանի մտավոր գործողություններով հագեցած մի գործընթաց, որի ժամանակ ոչ թե ուսուցիչը գիտելիքներ է հաղորդում, այլ աշակերտը ուսուցչի մանկավարժական վարպետության շնորհիվ ինքն է ձեռք բերում այդ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները: ՈՒսումնական գործունեության համար պատասխանատու են և՛ ուսուցիչը, և՛ աշակերտը:

Ընթերցանությունը գիտելիների ձեռքբերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Իսկ այս ամենի հիմքը դրվում է տարրական դպրոցից: ՈՒսուցիչը այնպես պետք է կազմակերպի դասը, այնպիսի մեթոդներ կիրառի, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջանա: Երբ երեխան սիրի ընթերցանությունը, դասերն առավել ակտիվ ու հետաքրքիր կընթանան:

Մեր օրերում, երբ, ցավոք, կամաց – կամաց մարում է հետաքրքրությունը գրքի, ընթերցելու նկատմամբ, պետք է խթանել սերը, ձգտումը դեպի գիրքը, ընթերցանությունը: Այսօր սովորողը ավելի շատ ձգտում է ընթերցել համակարգչով, որը թողնում է անդառնալի ծանր հեետևանքներ: Հարկ է, որ աշակերտը մոտիկից զգա գրքի բույրը, սիրի այն, այնժամ կունենանք առողջ, ուժեղ և բանիմաց սերունդ: Չէ որ մեր հուսալի ապագան մեր երեխաների ձեռքերում է:

Ստորև ներկայացնում եմ կարդացած ստեղծագործության գաղափարի քննարկման ժամանակ աշակերտների մասնակցության ակտիվությունը կարդալու տարբեր տեսակների կիրառումից հետո:



Գրականության ցանկ

- Ջ. Գյուլամիրյան, <<Հ. լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>
- Լ.Ս.Վիգոտսկի <<Խաղը և դրա դերը երեխայի մտավոր զարգացման մեջ>>
- Էլեկտրոնային աղբյուրներ